Երբ շահը լսեց և խիստ բարկացած Երևանի իշխան Ֆարզալի խանին (հրաման) գրեց՝ Ստեփանոսից հազար թուման տուգանք առնել, իրեն իր համախոհներով բանտարկել: Եվ այդպես արեց: Նրա համախոհներն էին Վայոց ձորի Պետրոս վարդապետը, որ Սուրբ Աթոռ Էջմիածնի աթոռակալն է, Մուղնու վանքի Գրիգոր վարդապետը, Ծաղկունյաց ձորի* Հովհաննես վարդապետը, սրանք նրա հետ դրվեցին ընդարձակ մի բանտ, բայց տուգանք տվին և ազատվեցին: Բայց Ստեփանոսին թեև բանտից հանեցին, դրին մի մթին ու գարշահոտ զնդանում, իսկ ոտքերը ծնկներից դրին կոճղերի միջև, որ կոչվում է տոմրուղ, իսկ թիկունքի տակ դրին ողորկ քար: Հոտի զազրությունից, մազերի աճումից ու որդունք բազմանալուց տառապանքով այնտեղ մեռավ: Ըստ նույն կտակի տարան Խոր Վիրապ և այնտեղ թաղեցին 1147 (1698) թվի հունվարի 4-ին:

ԳԼՈՒԽ ԿԶ
ԱՂՋԻԿՆԵՐ ՔԱՐՇԵԼԸ

Պարսիկների մեջ մի ազգ կա, որ գիլաք է կոչվում. այս ազգի մեջ մի աղջիկ կար՝ չքնաղ ու վայելուչ: Նրան պարսից Շահ Հուսեին թագավորի առջև գովեցին: Շահը հրամայեց նրան իր մոտ բերել: Երբ շահը տեսավ նրա դեմքի գեղեցկությունը, մազերի ճոխությունը, հասակի վայելչությունը, այտերի կարմրությունը, բերանի փոքրությունը, ատամների մանրությունը, դեմքի լայնությունը, մեծ զարմանքով հիացավ և ասաց՝ սրանից բերեք ինձ ևս տասն այս ազգից:

Հարճերի ներքինիները ելան, շրջում էին գիլաքների մեջ այդ բանի համար: Լուրը տարածվեց պարսից ողջ տերության մեջ, թե յոթ հազար օզբեկ, որ պարթևն է, եկել են պարսից հավատքին, բայց լեզու չեն իմանում, այս պատճառով շրջում են ամենայն ազգերի մեջ հավաքելու յոթ հազար աղջիկներ, յուրաքանչյուրին մեկական, որ նրանց ուսուցանեն պարսկերեն: Այս սուտ լուրի համար ով ուներ մի կույս տասը տարեկանից բարձր, մարդու տվեց՝ թե քրիստոնյաներ, թե մահմեդականներ: Նաև աղջիկները ելած

*Ծաղկունյաց ձորը Ծաղկաձորն է Հրազդան քաղաքի շրջանում:

շրջում էին տնից դուրս և եթե երիտասարդ էին տեսնում, բռնում էին նրա հագուստից, աղաչում էին տեր կանգնել իրենց, որպեսզի գերության չմատնվեն:

Այս բաների հետևանքով ամբողջ երկրի խաները շահ ձեռք բերելու դուռ գտան, քանզի հրաման հանին, իրենց իշխանության բոլոր գավառները և հավաքեցին մնացած վտիտ, տգեղ աղջիկներին որպես թե շահի հրամանով: Նրանց ծնողներից (աղջկա) գինը առնում և բաց էին թողնում աղջիկներին:

Այդպես արեց նաև Երևանի իշխան Ֆարզալի խանը. հավաքեց բազմաթիվ աղջիկներ՝ ավելի քան հինգ հարյուր, բերեց պառավ կանայք նրանց զննելու, չհավանելու դեպքում նրանց գինը ծնողներից առան և թողին նրանց դուստրերին: Բայց մնացին երեք* աղջիկ, որոնց համար ծնողները չկարողացան գները տալ: Նաև սակավ չափով գեղեցիկ էին Քանաքեռ մեծ գյուղից (հավաքվածները). սրանք էին Հովհաննես քահանայի Մարջան անունով աղջիկը, մեկն էլ Կարբուց Սարգիս քահանայինը, որ Քանաքեռում էր գտնվում իր քրոջ մոտ՝ Բեկզադա անունով: Սա նրանցից գեղեցիկ էր: Մեկը դուստրն էր Աստվածատուր անունով մի բարեպաշտ ու երկյուղած քրիստոնյայի՝ Բլբուլ կոչված մականունով, իսկ դստեր անունն էր Շահմազան՝ պարկեշտ ու համեստ, հարգևոր ու սրբաբերան, ինչպես իր մայր Հուստիանեն, որը Փոքր Շահ Աբասի և Նաջաֆ խանի օրերում քարշվեց այդ բաների համար և մեծ չարչարանքներ կրեց, բայց չգնաց: Նրա վարքը գրել եմ իրենց Հայսմավուրքի հիշատակարանում: Մոր համբավի պատճառով դուստրը նույնպես քարշվեց:

Երբ նա մտավ ժանվարը, որ քաճավան է, անողորմ կերպով ծեծեցին նրան, թևը կոտրվեց, բայց բռնի կերպով մտցրին ժանվարը և առան նրանց, տարան, ցույց տվին շահին: Շահը արհամարհեց նրանց և հրամայեց նրանց կնության տալ իր ծառաներին: Երկու քահանաների աղջիկների մասին որևէ բան չեմ լսել, բայց Բլբուլի դստեր մասին լուր բերին, թե նրա ամուսինը մեռել է, այլ ոք հարազատ չունի, որ տիրապետի նրան, իսկ աղջիկը ահավասիկ պահ է տրված մի քրիստոնյայի տան՝ Խզիրան քաղաքում, որ Ղազվինն է: Ահա նրա հայրը պատրաստվում է գնալու, նրան ազատելու:

* Բնագրում՝ քառասուն: